



"ՍՕՍ-ԱՈՒԴԻՏ" ՍՊԸ
"SOS-AUDIT" LTD

Անկախ աուդիտորական եզրակացություն № 15

«Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության 2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշվետվակված տարվա ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ

Ներկայացվում է «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության ղեկավարությանը

Մեր կողմից իրականացվել է «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության (Ընկերություն) կից ֆինանսական հաշվետվությունների աուդիտ, որոնք ներառում են 2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտվող տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփը և այլ ծանոթագրություններ:

Ղեկավարության պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ընկերության ղեկավարությունը պատասխանատու է ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտների համաձայն ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման համար: Այդ նպատակով ղեկավարությունը սահմանում է անհրաժեշտ վերահսկողության համակարգ, որը թույլ է տալիս պատրաստել ֆինանսական հաշվետվություններ՝ զերծ խարդախության կամ սխալների արդյունքում առաջացած էական խեղաթյուրումներից:

Աուդիտորի պատասխանատվությունը

Մենք պատասխանատու ենք Աուդիտի Միջազգային Ստանդարտներին համապատասխան մեր կողմից իրականացված աուդիտի հիման վրա նշված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ մեր արտահայտած կարծիքի համար: Այդ ստանդարտներով մեզանից պահանջվում է պահպանել վարկեցողության կանոնները և պլանավորել և անցկացնել աուդիտը՝ ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրումներից զերծ լինելու վերաբերյալ ողջամիտ երաշխիքներ ձեռք բերելու նպատակով:

Աուդիտորական աշխատանքները ներառում են ֆինանսական հաշվետվություններում ու համապատասխան ծանոթագրություններում արտացոլված տվյալները հիմնավորող փաստերի ձեռքբերման նպատակով մշակված ընթացակարգեր, որոնց ընտրությունը կախված է խարդախությունների և սխալների հետևանքով ֆինանսական հաշվետվություններում էական խեղաթյուրումների առկայության ռիսկերի վերաբերյալ աուդիտորական գնահատումներից:

ՀՀ, Երևան 0037, Ա. Տիգրանյան 38; Բեռ./ֆաքս՝ (374 10) 20 11 51; էլ-փոստ՝ sosaudit@web.am, sosaudit@yandex.ru
«Յունիբանկ» ՓԲԸ; №/h 241061006276

38 A. Tigranyan, Yerevan 0037; RA; Tel./fax: (374 10) 20 11 51; E-mail: sosaudit@web.am, sosaudit@yandex.ru
"Unibank" CJSC; CA 241061006276



"ՍՕՍ-ԱՈՒԴԻՏ" ՍՊԸ

"SOS-AUDIT" LTD


Ռիսկերի գնահատումները կատարելիս առդիտորը մշակում է համապատասխան ընթացակարգեր՝ ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման համար կիրառվող ներքին վերահսկողության գնահատման, և ոչ՝ ընկերության ողջ ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք կազմելու համար: Առդիտորական աշխատանքները ներառում են նաև կիրառված հաշվապահական հաշվառման սկզբունքների և ղեկավարության կողմից կատարված գնահատումների, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացման գնահատումը:

Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ համապատասխան առդիտորական ապացույցներ մեր կարծիքն արտահայտելու համար:

Կարծիք

Մեր կարծիքով կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում 2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության ֆինանսական վիճակը, ինչպես նաև նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքները և դրամական հոսքերը՝ համաձայն ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտների:

3 ապրիլի 2012թ.
ՍՕՍ-Առդիտ ՍՊԸ



Մանվել Դազարյան
Տնօրեն

Գնել Խաչատրյան
Առդիտոր